

## ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության և բժշկագիտության բնագավառում Փոխըմբռնման Հուշագիր է ստորագրվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի Պետության կառավարության միջև 2015 թ. դեկտեմբերի 17-ին Էլ-Քուվեյթ քաղաքում:

Կողմերի միջև փոխգործակցության ոլորտներն են.

- Համագործակցություն հանրային առողջության և բժշկագիտության ոլորտներում՝ ամրապնդելով միմյանց առողջապահական և բժշկագիտական կենտրոնների միջև համագործակցությունը;
- Փորձագետների փոխայցելություններ;
- Միմյանց երկրներում տեղի ունեցող առողջապահական և բժշկագիտական միջոցառումների մասին փոխտեղեկատվություն;
- Տեղեկատվության փոխանակում վարակիչ հիվանդությունների արձանագրման, վիճակագրական տվյալների, միջազգային առողջապահական կանոնների ներդրման, առողջապահության օրենսդրության, հանրային առողջապահության և բժշկագիտության ոլորտներում հրատարակված նյութերի, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտների մասին: